



## ՓԱՌԱՊԱՆԾ ՏԱՐԵՂԱՐԶԸ

1920 թ. նոյեմբերի 29-ը մեր ժողովրդի պատմության սաչ սոր դարադուրս կազմող տարիներէ է:

Հայ ժողովուրդը ռևոլուցիայի նախօրինակ պարտ էր իր գոյութեան ամենասարսափելի օրերը, որք արան սպանում էր բնաչեցումը և առհասարակ չբացումը պատմութեան բեմից: Եվ այդ սարսափի օրերին հաչեց Մեծ մարդու հանճարեղ Ստալինի ձայնը և ռևոլուցիայի փրկարար ձեռքը հասավ մեր ժողովրդին ու արան ազատեց վերահաս կործանումից: Հայ ժողովրդի համար բացվեց նոր կյանքի վարդազույն արշալույսը:

Հայ ժողովուրդը լծվեց իր կյանքի բարեկարգութեան և իր պետականութեան կառուցման:

Հայ եկեղեցին, որի համար հայ ժողովրդի պետականութեան հարցը նմիրական է եղել դեռևս Լուսավորչի օրերից, ավանդական սրբութեամբ և լրջմտութեամբ զբրկարաց ընդատաչեց մեր պետականութեանը և իր բոլոր ուժերը ք սպաս դրեց նրա բարգաւաճմանը:

Պատմականորեն ժառանգած այս տրադիցիան պաշտպանվեց ամենայն հոգատարութեամբ առավել ևս Հայրենական մեծ պատերազմի օրերին: Հայ եկեղեցին հանձին Ամենայն Հայոց Հայրապետութեան Ազգայնոր Տեղակալ Տ. Գեղորդ արքեպիսկոպոսի՝ ներկա Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսի՝ հրապարակ իջավ մեր հաղթանակի սրբազան գործին սպասարկելու:

Մեր եկեղեցիները և հավատացյալ համայնքները, ինչպես Հայրենիքում, նույնպես և արտասահմանում, իրենց համեստ լուման օրին Հայրենիքի պաշտպանութեան գոհասեղանին:

Սակայն հայ եկեղեցին դեռ շատ անելիքներ ունի Մար Հայրենիքին և մեր պետականութեանը օժանդակելու կապակցութեամբ և ի սպաս դնելու իր բարոյական բոլոր միջոցները նրա համար: Այսօր, երբ հրատապ խնդիր է ի սփյուռս աշխարհի

ցրված հայ ժողովրդին համախմբելու մի սրտանակալը դրոշք Սովետական Հայաստանի դրոշի տակ, հայ եկեղեցին չի խնայում իր ուժերը. նա գործադրում է բոլոր քանքերը, թե Սփյուռքում և թե Սովետական Սիւրիայի մեջ, բստ ամենայնի օժանդակելու մեր պետականութեանը առաջադրված խնդիրներին բարեհաջող լուծում ապաւ համար:

Սովետական Հայաստանի 25 տարիները նոր ոսկեդար հանդիսացան հայ ժողովրդի համար:

Եթե մեր պատմութեան և դարի ոսկեդարը մեզ բերել է գիր և գրականութուն, որով պետականութունից զրկված ժողովրդի ձեռքը իր ազգայնութեանը, իր կրոնը և ժողովրդական իր կերպարն անաղարտ պահելու զենքերն է միայն ընձեռել, ապա Սովետական ոսկեդարը իր թեկրին բերել է առաջին ոսկեդարի նվաճումներն ապահովելու և զարգացնելու բոլոր հնարավորութունները:

Նոյեմբերը դարբնեց մեր պետականութունը, մեզ դարձրեց տեր և տնորեն մեր Հայրենիքին, նա մեր Տեղված և արհամարհված ժողովրդին դասեց Մեծ Միութեան ընտանիքի լիիրավ և հավասար անդամների շարքը. նա մեզ շնորհեց այն բոլոր միջոցներն ու հնարավորութունները, որոնք անհրաժեշտ են ժամանակակից մրտրով պետականութուն կազմելու համար, նա ստեղծեց աննախընթաց պայմաններ մեր կուլտուրայի՝ գրականութեան, արվեստի, գիտութեան ծաղկման ու բարգաւաճման համար:

25 տարվա մեր բոլոր նվաճումների փառքն ու պսակն է կազմում մեր նորաստեղծ պետութեան ամուր և հզոր պատվարը՝ մեր հերոսական կարմիր Բանակը, որ ֆաշիստական զազանների դեմ մղված պայքարում ցուցաբերեց անօրինակ արիւթութուն ու հերոսութուն և փառքով օժեց իր մեծ Հայրենիքի ճակատը:

Հայ ժողովուրդը իր Հայրենիքի քսանհինգ տարիներում ձեռք բերած նվաճումների հա-

մար երախտապարտ է ուսման, եղբայրական ժողովրդին և միութենական ժողովուրդների իմաստուն ղեկավար Մեծ Ստալինին:

Այսօր, մեր Հայրենիքի պանծալի 25-ամյակի օրը աշխարհի յուրաքանչյուր ազնիվ ու հայրենասեր հայ ակնածանքով ու փոքրին երախտագիտության զգացմունքով է արտասանում աշխարհի ամենամեծ մարդու, հանճարեղ Ստալինի անունը և արեշատություն բարեմաղթում Մեծ Միության ժողովուրդների խմաստուն առաջնորդին, հայ ժողովրդի միակ ազատարարին:


Այսօր համայն աշխարհը վկա է, որ ՍՍՄԿ-ի ջանքերով եվրոպան փրկվեց նրան

սպանացող ֆաշիստական հորդանների մըշտական սարկաչումից և ժողովուրդներն ազատագրվեցին 20-րդ դարի բարբարոսների սպրդական լծից:


Պատմական այս մեծ ակտից հետո հասկանալի է, թե ինչու արտասահմանում դեպերող մեր հայ եղբայրներն իրենց հույսերի և իղձերի իրականացումը Ստալինական Միության մեջ են որոնում:

Սփյուռքի հարսության հայացքներն այսօր, այս պատմական մեծ տոնի օրը, ուղղված են Մեծ Ստալինին և Սովետական Հայաստանին իրականացնելու իրենց դարավոր իղձը՝ վերագարձը դեպի Մայր Հայրենիք Սովետական Հայաստանը:





Երևան — 1881 թ. Կառավարական տունը



Երևան — Համալսարանը Կենդի հրավարակից